ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականկի մարտի 14-ի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակավայրերից զոհված (մահացած) զինծառայողներին անշարժ գույքի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Սերյոժա Շուրայի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված ավտոտնակը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Հովիկ Ռաֆիկի Սահակյանի կողմից ինքնակամ կառուցված,

օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված անասնաշենքը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքը անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի առաջին գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Մանուկյան/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (13) **Դեմ՝ (0)** **Ձեռնպահ՝ (0)**

ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 230-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով, 4-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակավայրերից Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) զինծառայողներին անշարժ գույքի հարկի գծով սահմանել արտոնություն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (13) **Դեմ՝ (0)** **Ձեռնպահ՝ (0)**

ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Զ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի 14-ի
N 16-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

հ/հ	Բնակավայրի անվանումը	Զոհվածի (մահացածի) անուն, ազգանուն, հայրանուն	Արտոնության նժամանակա հատվածը (թվական)	Գումարը (Հայաստանի Հանրապետության դրամ)
1	Աշոցք	Ավագյան Սիմոն Միշայի	2025	2668
2		Նահապետյան Ռաֆայել Հովսեփի	2025	26854
3		Վարոսյան Արմեն Սամվելի	2025	7470
4		Մելիքյան Նարեկ Սարգսի	2025	5408
5		Պողոսյան Հրաչ Աշոտի	2025	16489
6		Վարոսյան Սերյոժա Համլետի	2025	7266
7		Մխիթարյան Վոլոդյա Ալբերտի	2025	13817
8		Հակոբյան Հայկ Ցոլակի	2025	6211
9		Մխոյան Անդրանիկ Միհրի	2025	10294
10		Համբարձումյան Դավիթ Գեղամի	2025	35116
11		Միրզոյան Արթուր Արամայիսի	2025	7758
12		Մելիքյան Շավարշ Մելիքսեթի	2025	3161
13		Ղազարյան Արմեն Սամվելի	2025	7549
14	Բավրա	Գաբրիելյան Գնել Կարապետի	2025	41222
15		Իվանյան Սիմոն Մեխակի	2025	18539
16	Ղազանչի	Արոսյան Մելիքսեթ Սարգսի	2025	3540
17		Մելքոնյան Տիգրան Ստեփանի	2025	22003
18	Մեծ Սեպասար	Մկրտչյան Սամվել Սերոբի	2025	21320
19		Գրիգորյան Ջիվան Սամվելի	2025	14609
20	Կրասար	Գրիգորյան Լյուդվիգ Ներսեսի	2025	13791
21		Հովհաննիսյան Մարգար Վահանի	2025	35968
22		Հովհաննիսյան Սեդրակ Սամվելի	2025	21313
23		Մխիթարյան Նարեկ Մխիթարի	2025	14390
24		Մելիքյան Մելիք Մուշեղի	2025	40064
25	Զույգաղբյուր	Կարապետյան Մանվել Արծրունու	2025	35634
26		Մարկոսյան Ռաֆիկ Միշայի	2025	12918
27	Կարմրավան	Կարապետյան Արթուր Կարապետի	2025	33012
28	Ցողամարգ	Հարությունյան Սևակ Հարությունի	2025	22337
29		Մովսիսյան Սևակ Երվանդի	2025	28931
30	Թորոսգյուղ	Գրիգորյան Արման Յուրիկի	2025	19106
31		Ղուկասյան Ալեք Լիպարիտի	2025	19532
32		Սարգսյան Վաչագան Արամի	2025	17942
33		Համբարյան Ալեքսան Հովհաննեսի	2025	18332
34	Գոգհովիտ	Սուքիասյան Ստյոպա Սարդարի	2025	12728
35	Արփենի	Հովսեփյան Ֆիրդուս Մասիսի	2025	13166

36	Փոքր Սարիար	Սահակյան Խաչիկ Հովհաննեսի	2025	10967
37	Հարթաշեն	Սարգսյան Նորայր Վարդանի	2025	9632
38	Սարագյուղ	Սերոբյան Նուրիբեկ Հովհաննեսի	2025	99478
Ընդամենը				**750535**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 17-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (13) **Դեմ՝ (0)** **Ձեռնպահ՝ (0)**

ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի 14-ի
N 17-L որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:
2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:
3. Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:
4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):
5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:
6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:
7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝
1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.
2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.

9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում են ՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.

19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2025 թվականի մարտի 14-ի
N 17-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ										
N Հ/h	Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազ-մում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Իրազեկումը ներկայացնելու ձևը	Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները	Հավաքի տեսակը	Հավաքի վայրը	Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը	Հավաքի նպատակը	Մասնակիցների սպասվող թիվը	Երթի ուղին և ժամանակացույցը	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2										
3										
4										
5										

Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ							
Ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով << ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի անցկացման վերաբերյալ << ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի անցկացման վերաբերյալ << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը
12	13	14	15	16	17	18	19

Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ							
Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին << ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվե՞լ է դատական կարգով	Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը
20	21	22	23	24	25	26	27

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝_____ _____ էջից:
(թվով) (տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _____.
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

Օրինակելի ձև

_____
(օրը, ամիսը, տարին)

_____ համայնքի ղեկավար _____
(համայնքի անվանումը) (համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

ՀՀ քաղաքացի _____ - ից
(անունը,հայրանունը, ազգանունը)

Բնակության և ծանուցման հասցե՝ _____:

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի (պարոն, տիկին) _____
(համայնքի ղեկավարի ազգանունը)

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1. Հավաքի վայրը՝

_____

2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝

_____

3. Հավաքի նպատակը՝

_____

4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ _____

5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝_____

_____

_____:

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ _____ մարդ:

7. Հավաքի ընթացքում (ժամը __00-__00) նախատեսվում է երթ՝

_____

(նշել երթուղին)

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝

Ազգանուն, անուն, հայրանուն՝

_____,

Անձնագիր՝_____, տրված __ __20__, ___-ի կողմից, Հեռախոս՝ _____, Փոստային հասցե՝ ____ ՀՀ, _____, Էլեկտրոնային հասցե՝ _____ :

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ (լրացնել եթե հավաքի ղեկավարումը հանձնարարվել է այլ անձի)

Ազգանուն, անուն, հայրանուն՝

_____,

Անձնագիր՝ _____, տրված __ __20__, ____-ի կողմից, Հեռախոս՝ _____ Փոստային հասցե՝ ____ ՀՀ, _____ Էլեկտրոնային հասցե՝ _____:

Խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը:

2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Առդիր՝ հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը՝ -- թերթ:

Հավաքի կազմակերպիչ՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 17-Լ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.

Նախագիծը կրում է ներքին (լոկալ) բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն՝ առավել արդյունավետ պահպանելու, բարելավելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, աճուրդի միջոցով օտարել մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությանը և հայտարարել աճուրդ:
2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման հավելվածում նշված անշարժ գույքերի աճուրդի միջոցով օտարելու աճուրդը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (12)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (1)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Զ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի
մարտի 14-ի N 18-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ – ՎԱՃԱՌՔ

N	Հողամասի գտնվելու վայրը, հասցեն	Հողամասի ծածկագիրը,	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Օտարման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափ-ակումների (ներառյալ՝ սերվիտուտ-ների) առկայությունը	Օտարման եղանակը	Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)	Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%)	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ)	Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%)	Գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%)
1	Մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գ. Մեծ Սեպասար, 13-րդ փողոց, հողամաս 2/2	08-081 -0021-0021	0.202165	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	բնակելի կառուցապատման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	130.0	373190	50	5
2	Մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Վ. Ռուդակովի փողոց, 2-րդ նրբանցք , հողամաս 1/2	08-015 -0585-0002	0.017596	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	բնակելի կառուցապատման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	250.0	62480	50	5
3	Մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գ. Սալուտ, 1-ին փողոց, 1-ին փակուղի, հողամաս 1	08-099 -0001-0051	0,0375	բնակավայրերի հողեր	բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	130.0	69230	50	5

4	Մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գ. Լեռնագյուղ, 2-րդ փողոց, հողամաս 9	08-045 -0002-0007	0,123	բնակավայրերի հողեր	բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	250.0	285980	50	5
5	Մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գ. Սալուտ, Զորաշենի խճուղի, հողամաս 17/1	08-099 -0001-0052	0,04535	բնակավայրերի հողեր	բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	130.0	83720	50	5
6	Մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գ. Սալուտ, Զորաշենի խճուղի, հողամաս 17/2	08-099 -0001-0054	0,21143	բնակավայրերի հողեր	բնակելի կառուցապատման	բնակելի կառուցապատման համար	չկան	բաց աճուրդ	1 420 000	120.0	390300	50	5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐՅՈԺԱ ՇՈՒՐԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Սերյոժա Շուրայի Հակոբյանը, իր 2025 թվականի փետրվարի 28-ի դիմումի համաձայն, ընդունել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-085-0010-0019 կադաստրային ծածկագրով 0.02706 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված ավտոտնակի և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-085-0010-0019 կադաստրային ծածկագրով 0.02706 հեկտար հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 44.**39** քառակուսի մետր ներքին և 56.49 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մուսայելյան, 1-ին փողոց, ավտոտնակ 14/1, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

N 28022025-08-0011) ուղղակի կարգով ***68710 (վաթսունութ հազար յոթ հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով,*** ինքնակամ շինությունն իրականացրած ֆիզիկական անձ, քաղաքացի՝ Սերյոժա Շուրայի Հակոբյանին (հետագայում քաղաքացի) նույնականացման քարտ՝ 012088522, տրված՝ 24.03.2021թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, գյուղ Մուսայելյան, 4-րդ փողոց, բնակելի տուն 15,) վաճառելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (12)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (1)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.		
ՄԱՐԳԱՐՅԱՆ		
ՄԵԼԻՔՅԱՆ		
ՆԵՐՍԻՍՅԱՆ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎԻԿ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Հովիկ Ռաֆիկի Սահակյանը, իր 2025 թվականի մարտի 7-ի դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-085-0001-0013 կադաստրային ծածկագրով 0.017025 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված ավտոտնակի և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-085-0001-0013 կադաստրային ծածկագրով 0.017025 հեկտար հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 41.**14** քառակուսի մետր ներքին և 59.73 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 1-ին փողոց, անասնաշենք 17, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07032025-08-

0010) ուղղակի կարգով ***88210 (ութսունութ հազար երկու հարյուր տաս)*** **Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով,** ինքնակամ շինությունն իրականացրած ֆիզիկական անձ, քաղաքացի՝ Հովիկ Ռաֆիկի Սահակյանին (հետագայում քաղաքացի) անձնագիր՝ AS0510439, տրված՝ 06.02.2019թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, գ. Մուսայելյան, 1-ին փողոց, բնակելի տուն 24) վաճառելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (12)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (1)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.		
ՄԱՐԳԱՐՅԱՆ		
ՄԵԼԻՔՅԱՆ		
ՆԵՐՍԻՍՅԱՆ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԳՅՈՒՄՐԻԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2023 թվականի հուլիսի 14-ի թիվ 03/13183-2023 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող, 08-015-0131-0059 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 21,9545 հեկտար վարելահողերը անհատույց, անորոշ ժամկետով (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությանը՝ գիտա-արտադրական գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին պայմանագիր և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (13) **Դեմ՝ (0)** **Ձեռնպահ՝ (0)**

ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգի 135-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի առաջին գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի ապրիլի 16-ը՝ ժամը՝ 15:00:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (12)	**Դեմ՝ (1)**	**Ձեռնպահ՝ (0)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ	ՄԵԼՔՈՆՅԱՆ	
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.		
ՄԱՐԳԱՐՅԱՆ		
ՄԵԼԻՔՅԱՆ		

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«14» մարտի 2025 թվական
գյուղ Աշոցք